Քննարկվել է հաստատության
Մանկավարժական խորհրդի
23 12 2022թ. թիվ 05
արտահերթ նիստում

Տնօրեն՝ Ք. Ահարոնյան

Քննարկվել է հաստատության
կոլեգիալ կառավարման խորհրդի
26 12 2022թ. թիվ 09
արտահերթ նիստում

Նախագահ՝ Ա. Եսայան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՍՍՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ (ԷԹԻԿԱՅԻ)

Գյումրի 2022

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնագիրքը ՀՀ ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի (այսուհետ՝ Ուսումնարան) վարչական, դասախոսական, ուսումնաօժանդակ աշխատակազմի, ուսանողների (այսուհետ՝ Դերակատարներ) բարեվարքության (էթիկայի) կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք), նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է Ուսումնարանում դերակատարների բարոյաէթիկական սկզբունքները, վարքագծի կանոնները, իրավունքներն ու պարտականությունները:
2. Կանոնագիրքը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ Աշխատանքնային օրենսգիրքը, Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության էթիկական արժեքների և սկզբունքների բուխարեստյան հռչակագիրը, (ՅՈՒՆԵՍԿՕ-ՍԵՊԵՍ, 2004թ.) Ուսումնարանի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները: Նրա կիրառելիությունն ապահովվում է Ուսումնարանի համապատասխան կանոնակարգերի և ընթացակարգերի միջոցով:
3. Սույն կանոնակարգով էթիկան Ուսումնարանի առօրյա աշխատանքում ընդունված արժեքների, սկզբունքների և նորմերի համակարգն է, որն ունի Դերակատարերին լավագույնս ծառայելու և նրանց շահերը պաշտպանելու, միջանձնային բարենպաստ և համագործակցային պայմաններ ստեղծելու, նրանց հեղինակությունը բարձրացնելու:
4. Սույն Կանոնագրքով սահմանված կանոնները պարտադիր են Կանոնագրքի Դերակատարների համար:

ԳԼՈՒԽ 2. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կանոնագրքի հիմնական **խնդիրներն են**.

1. Դերակատարներին ներկայացնել Ուսումնարանի էթիկայի նորմերը, դրանց պահպանման չափանիշները և դրանց խախտման դեպքում պատասխանատվություն կրելու ընթացակարգը:
2. ձևավորել էթիկայի սկզբունքների պահպանման անհրաժեշտ մշակույթ և միջավայր:
3. Ապահովել Կանոնագրքով սահմանված նորմերի և սկզբունքների մատչելիությունը և տարածումը Դերակատարների շրջանում:
4. Կանխարգելել ակադեմիական անազնվության դրսևորումները և զարգացնել ակադեմիական ազնվության պահպանման հնարավորությունները:
5. Պաշտպանել Դերակատարների իրավունքները և շահերը, նրանց համար ապահովել արդարություն:

6. Հաստատել կարգ ու կանոն Ուսումնարանում և Դերակատարների միջև փոխհարաբերություններում:
7. Հստակեցնել Դերակատարների պարտականությունների վերահսկման մեխանիզմները:
8. Բարձրացնել հաշվետվողականության մակարդակը:
9. Անկողմնակալ և արդարացի լուծել էթիկայի նորմերի խախտմանը վերաբերող հարցերը և դեպքերը:

ԳԼՈՒԽ 3. ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Դերակատարների համար էթիկայի հիմնարար սկզբունքները և դրանց դրսևորման ձևերն են.

3.1. Բարեվարքություն. Կրթական ոլորտի բոլոր Դերակատարների վարքագիծը պետք է համահունչ լինի հիմնական արժեքներին, հիմնված լինի դրական բարոյական և էթիկական սկզբունքների ու չափանիշների վրա: Այն կապող օղակ է էթիկայի սկզբունքների ու կրթության որակի միջև և միևնույն ժամանակ կանխարգելում է կոռուպցիոն դրսևորումները: Վարչական աշխատակազմն ունի հատուկ պարտավորություն: Նրանից պահանջվում է կառավարման և պաշտոնական բոլոր տեսակի գործընթացներում բարեվարքություն դրսևորել ավելի ցածր պաշտոն զբաղեցնող գործընկերների, ուսանողների, հանրության հետ փոխհարաբերություններում: Ուսանողների համար բարեվարքությունը «ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելու» պարտավորությունն է: Նրանք Ուսումնարանի վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ աշխատակազմի, ուսանողների հետ փոխհարաբերություններում պետք է դրսևորեն համապատասխան վարքագիծ:

3.2. Ազնվություն. Բացառում և արգելում է ուսումնարանի Դերակատարներին կատարել այնպիսի գործողություն, որը կարող է որակավորվել որպես խարդախություն, խաբեություն, շորթում, գողություն, ինչպես նաև այլ անազնիվ կամ քրեական բնույթի որևէ արարք:

Ուսումնարանի աշխատակազմը ուսանողների համար դասավանդում, ուսուցում և գնահատում իրականացնելիս պետք է պահպանի ազնվություն: Ուսանողների բոլոր տեսակի աշխատանքները պետք է գնահատվեն անաչառ՝ բացառելով կամայական բնույթի հովանավորչություն, արտոնություն, կողմնակալություն, կաշառքի դրսևորում:

Դերակատարներն իրենց պատասխանատվության տակ գտնվող բնագավառներում ունեն հատուկ պարտավորություն՝ իրենց պաշտոնեական դիրքի շրջանակներում և միջանձնային հարաբերություններում լինել

ճշմարտախոս:

Ուսանողները աշխատակազմի նման պետք էունենան խիստ պարտավորություն՝ ուսումնառության և գնահատման գործընթացներում հավատարիմ լինեն ազնվության սկզբունքին: Ուսանողները գնահատման համար պետք է ներկայացնեն բացառապես իրենց կողմից կատարված աշխատանքներ (գործնական, լաբորատոր, կուրսային, թե ավարտական)՝ խուսափելով գրագողությունից և խարդախությունից (ներառյալ համացանցային ձեռքբերումները):

3.3. **Ճշմարտացիություն և թափանցիկություն.** Այս սկզբունքները բխում են «ազնվությունից» և բոլոր Դերակատարներից պահանջվում է ասել միայն «ճշմարտությունը» և չստել Ուսումնարանի ներսում իրականացվող ցանկացած տիպի հաղորդակցության ժամանակ, գործել բացահայտ, կանխատեսելի և հասկանալի: Այն նպատակ ունի խթանել բոլոր Դերակատարների մասնակցությունը և հաշվետվողականությունը, ազատորեն հանրայնացնել ինչպես Ուսումնարանի՝ որպես կազմակերպության, և բոլոր Դերակատարների մասին տեղեկատվությունը՝ պահպանելով չափը և անձնական տվյալների գաղտնիությունը (պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ դերակատարի մասին է խոսքը):

Ճշմարտացիության սկզբունքը ընդգրկում է «քննադատական վերլուծություն և հարգանք հիմնավորված տեսակետների» նկատմամբ, հարգանք «մտքերի ազատ փոխանակման և խոսքի ազատության» նկատմամբ[1]:

3.4. **Հարգանք և վստահություն այլոց հանդեպ.** պահանջվում է բոլոր շահառուների և շահագրգիռ կողմերի արժանապատվության, ֆիզիկական, հոգեկան ու մտավոր առողջության ու անձեռնմխելիության նկատմամբ, ճանաչել Դերակատարների՝

- իրենց մասնավոր կյանքը պաշտպանելու և ֆիզիկական ու հոգեբանական բռնությունից պաշտպանված լինելու ընդհանուր իրավունքները,
- միմյանց հետ հարաբերություններում դրսևորել համապատասխան վարքագծի դրսևորումաշխատանքային գործունեության մեջ ճիշտ համագործակցություն և կոլեգիալություն ապահովելու համար:
- Այլոց նկատմամբ հարգանքին զուգահեռ կարևոր է պահպանել վստահություն միմյանց նկատմամբ" բոլոր Դերակատարները պետք է վստահ լինեն այլոց ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության նկատմամբ և ակնկալեն նրանց վստահությունն իրենց նկատմամբ:

---

[1] Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության էթիկական արժեքների և սկզբունքների բուխարեստյան հռչակագիր (ՅՈՒՆԵՍԿՕ-ՍԵՊԵՍ, 2004թ.)

- պատասխանատվություն կրել իրենց լիազորությունների պատշաճ կատարման համար և ապահովել Ուսումնարանում սահմանված «վերից վար, վարից վեր» կրթական, գիտական և ֆինանսական գործունեության հաշվետվողականությունը:

3.5. Հաշվետվողականություն. բոլոր Դերակատարներից պահանջվում է պատասխանատու լինել իրենց լիազորությունները պատշաճ կատարելու համար: Հաշվետվողականությունը կլինի ավելի ամուր հիմքերի վրա, եթե բոլոր Դերակատարները հարգում և վստահում են միմյանց:

3.6. Արդարացիություն. Դերակատարներից պահանջում է միմյանց հետ փոխհարաբերություններում դրսևորել անկողմնանակալ, անաչառ, կանխատեսելի, առանց խտրականության, ազնիվ և օբյեկտիվ վարքագիծ: Այն պետք է լինի բոլոր Դերակատարների նպատակը:

Դերակատարների առաջխաղացման հետ կապված ցանկացած գործընթացում պետք է ապահովվի արդարացիություն՝ հիմնվելով թափանցիկ, անկողմնակալ, կանխատեսելի, հետևողական և օբյեկտիվ չափանիշների վրա:

Ուսանողները պետք է դրսևորեն արդարացիություն համակուրսեցիների և Ուսումնարանի հետ հարաբերություններում: Ուսանողական կառույցների ներկայացուցիչները պետք է իրենց պարտավորությունները կատարեն՝ պահպանելով մյուսների նկատմամբ արդարացիության սկզբունքը, և անհարկի չանտեսեն մյուսներին ներկայացուցչական տարբեր առաջնահերթություններ որոշելիս:

3.7. Հավասարություն և սոցիալական արդարությունը, որը բացառում է խտրականությունը և պահանջում է պայքարել ռասսիզմի, կողմնակալության և խտրականության կամայական դրսևորման դեմ:

Ուսումնարանի ողջ աշխատակազմը իր բոլոր գործընթացներում պետք է դրսևորի հավասարության, արդարության և սոցիալական արդարության սկզբունքներին համահունչ գործունեություն ուսանողների և գործընկերների հետ բոլոր փոխհարաբերություններում:

Ուսանողները պետք է հստակ ձևով դրսևորեն ոչ խտրական և անկողմնակալ վերաբերմունք համակուրսեցիների և ՈՒսումնարանի աշխատակիցների հետ փոխհարաբերություններում, Մասնաճյուղի՝ կրթությանն ուղղված սոցիալական կամ մասնակցային ժողովրդավարության համատեքստում:

3.8. Կրթական համակարգի և կրթական հաստատությունների ժողովրդական և էթիկական ղեկավարում և կառավարում. պահանջում է, որ բոլոր Դերակատարները ընդունեն, որ ղեկավարումը և կառավարումը պետք է հիմնված լինեն ժողովրդավարական ներգրավվածության վրա և իրականացվեն էթիկայի հիմունքներով ղեկավարվող առաջնորդների կողմից: Իսկ

աշխատակիցների ներգրավվածությունը բարձրացնելու համար պետք է որոշումների կայացման մեջ կարևորել բոլոր Դերակատարների մասնակցությունը:

3.9. **Որակյալ կրթություն.** պահանջում է յուրաքանչյուր Դերակատարի անվերապահ հանձնառությունը տրամադրել և ձեռք բերել հնարավորիս բարձր որակի կրթություն:

3.10. **Միջազգային համագործակցություն.** բոլոր Դերակատարներից պահանջում է ճանաչել կրթական գործունեության մեջ միջազգային դրական համագործակցության կարևորությունը:

ԳԼՈՒԽ 4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ

Ակադեմիական ազնվությունը էթիկայի հիմնարար սկզբունքներից մեկն է: Ակադեմիական ազնվության համակարգը ակադեմիական գործընթաց է, որը հիմնվում է կրթական հնարավորությունների վրա, և ոչ իրավաբանական գործընթաց է: Ակադեմիական ազնվության պահպանումը Ուսումնարանի բոլոր Դերակատարների համար պետք է դառնա պատվի կանոն. «Ես լինելու եմ ակադեմիապես ազնիվ իմ բոլոր ակադեմիական աշխատանքներում և չեմ հանդուրժելու այլ անձանց ակադեմիական անազնվությունը»:

- **Ակադեմիական ազնվությունը** սահմանվում է որպես հինգ հիմնարար արժեքների՝ **ազնվության, վստահության, անկեղծության, հարգանքի և պատասխանատվության** պահպանման պարտավորություն՝ անկախ իրավիճակից:
- **Ակադեմիական ազնվությունն** անհրաժեշտ է Ուսումնարանի առաքելության և հիմնական նպատակների արդյունավետ իրականացման, ուսումնարանի կառուցվածքի և ամբողջականության պահպանման պահպանելու, ազնիվ և փոխադարձ վստահության մթնոլորտի ապահովման, ուսումնարանի դրական միջավայրի ձևավորման և որակյալ կրթական ծառայությունների տրամադրման համար:

Ակադեմիական ազնվություն՝ նշանակում է կատարել բոլոր ակադեմիական աշխատանքներն առանց գրագողության, խաբեության, ստելու, խարդախության, գողության, առանց այլ անձանցից արգելված օգնություն ստանալու կամ տեղեկատվության ցանկացած հանրամատչելի աղբյուրից օգտվելու:

- **Ակադեմիական աշխատանքը** ցանկացած գործողություն է, որը ներկայացվում է որպես սեփական գործունեության արդյունք: Ուսանողների համար ակադեմիական աշխատանքը ուսումնարանի կրթական ծրագրերին համապատասխան որպես ակադեմիական առաջադիմության արդյունք

ներկայացված ցանկացած աշխատանքն է: **Ակադեմիական աշխատանքներ են** համարվում ավարտական և անհատական աշխատանքները, լսարանային և տնային առաջադրանքները, քննությունները, ստուգարքները, կիսամյակային տարբեր ինքնուրույն և թեմատիկ աշխատանքները, հաշվետվությունները, մոդուլների արդյունքների ամփոփումները ներկայացումները, ստեղծագործական, նախագծային աշխատանքները, լաբորատոր աշխատանքները, հաշվարկները, պրակտիկայի շրջանակներում ըստ պլանի կատարված աշխատանքները այլն: Դրանք կարող են լինել գրավոր, բանավոր, էլեկտրոնային ինչպես նաև մասնագիտական անհատական գործնական առաջադրանքներ:

- **Ակադեմիական ազնվություն է համարվում՝**
  - ✓ Քննական,ստուգարքների, արդյունքների ամփոփման, թեմատիկ գրավորների ընթացքում ազնիվ և պատշաճպահվածքը,
  - ✓ գրագողության բացառում
  - ✓ մտավոր սեփականության պաշտպանություն:

ԳԼՈՒԽ 5. ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Վարչական աշխատակազմի անդամները պարտավոր են.

1. վեր դասել Ուսումնարանի շահերն իրենց սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ պաշտոնական դիրքի օգտագործմամբ կամ չարաշմամբ
2. պարտականությունների իրականացման ժամանակ լինել ազատ, անաչառ, անկաշկանդ, չընդունել որոշակի եղանակով գործելու կամ չգործելու հրահանգ՝ ցանկացած անձի (բացառությամբ վերադասի), այլ կազմակերպության, քաղաքական որևէ կուսակցության, արհմիության, կրոնական կամ որևէ այլ արտաքին աղբյուրի կողմից,
3. քննարկման ենթակա օրակարգային հարցերում (ներառյալ՝ կադրերի բաժնի կողմից աշխատակիցների նշանակման և առաջխաղացման, ֆինանսական, պայմանագրային և այլ համապատասխան հարցերը) իրենց կամ իրենց ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահի առկայության դեպքում հայտնել այդ մասին նախքան քննարկման սկիզբը և պաշտոնապես հրաժարվել այդ հարցերի քննարկմանը մասնակցելուց,
4. չպահանջել կամ չընդունել որևէ կաշառք կամ այլ ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ ընդունել որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է

ազդեցություն գործել իրենց հետագա գործունեության վրա որոշումներ կայացնելիս,

5. կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ցանկացած փորձի մասին անմիջապես հայտնել անմիջական ղեկավարին,
6. Ուսումնարանի կառավարման և ղեկավարման հետ կապված կանոններ ընդունելու և կիրառելու իրենց կոլեկտիվ իրավասությունը կամ անձնական պատվիրակված իրավասությունն իրականացնելիս ապահովել, որ այդ կանոնները համապատասխանեն գործող օրենսդրությանը, Ուսումնարանի կանոնադրությանը և կանոնագրքում սահմանված էթիկայի սկզբունքներին,
7. հարգել Ուսումնարանի աշխատակիցների և սովորողների արժանապատվությունը:

ԳԼՈՒԽ 6. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ուսումնարանի աշխատակազմի անդամների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկայի ընդհանուր սկզբունքներին:
- Աշխատակազմի իրավունքները սահմանված են «ՀՀ աշխատանքային օրենսգրքով», «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին օրենքով» Ուսումնարանի կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:
- **աշխատակազմի** անդամներն իրավունք ունեն.
  - ✓ ազատորեն արտահայտվելու և տեղեկություն ստանալու,
  - ✓ գնահատվելու որպես դասավանդող՝ ելնելով մտավոր և մասնագիտական չափանիշներից, առանց իրենց քաղաքական ու կրոնական հայացքների կամ անձնական նախապատվության որևէ այլ հանգամանքի,
  - ✓ որոշելու իրենց կողմից կազմակերպման և մատուցման ձևը՝ մասնագիտական չափորոշիչների, ուսումնական պլանների պահանջներին համապատասխան,
  - ✓ չընդունելու որոշակի ձևով գործելու կամ չգործելու որևէ հրահանգ ցանկացած անձից (բացառությամբ՝ վերադասի կամ մասնաճյուղի տնօրենի), որևէ քաղաքական կուսակցությունից, արհմիությունից կամ կրոնական խմբից, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
  - ✓ էթիկայի սկզբունքների ցանկացած ենթադրյալ խախտման մասին գրավոր հայտնելու ղեկավարությանը՝ առանց իրենց անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

- **դասախոսը/վարպետը պարտավոր է նաև.**

1. հարգել ուսանողներին, ուսափել ցանկացած շահագործումից, հետապնդումից և ուսանողների նկատմամբ խտրական վերաբերմունքից,
2. պաշտպանել ուսանողների ակադեմիական ազատությունը,
3. պահպանել փոխադարձ հարգանքի և վստահության սկզբունքը ուսանող - դասախոս փոխհարաբերություններում,
4. պահպանել օբյեկտիվություն, ճշմարտացիություն և ազնվություն յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ,
5. չթելադրել և չպարտադրել ուսանողին սեփական կամքը և հայացքները,
6. ուսանողի հետ չգնալ որևէ համաձայնության, ինչը կարող է դրսևորվել որպես ակադեմիական ազնվության խախտում,
7. պահպանել ակադեմիական ազնվությունը և հետամուտ լինել դրա մակարդակի բարձրացմանը,
8. որպես կուրսի ղեկավար՝ ուսանողներին իրազեկել էթիկայի կանոնագրքի, իրենց պարտականությունների և իրավունքների մասին:
9. Ուսումնարանի գույքը և նյութական միջոցներն օգտագործել նպատակային և խնայողաբար

ԳԼՈՒԽ 7. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- ՀՀ օրենսդրության համաձայն՝ ուսանողների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկայի ընդհանուր սկզբունքներին, և այդ սկզբունքները պետք է կիրառելի լինեն բոլոր Դերակատարների հետ հարաբերություններում:
- ուսանողների իրավունքները սահմանված են ՀՀ օրենքով, Ուումնարանի կանոնադրությամբ, կրթության մասին պայմանագրով, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:
- Ուսումնարանի **ուսանողն** իրավունք ունի.
  - ✓ զերծ մնալու այլ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքից՝ անկախ ռասայից, կրոնից, էթնիկ ծագումից, քաղաքական հայացքներից, տարիքից, սեռից, հաշմանդամության կամ անձնական բնույթի այլ հանգամանքից,
  - ✓ ազատ արտահայտվելու և մասնակցելու հավաքներին՝ առանց դասերի արդյունավետ իրականացմանը խոչընդոտելու, էթիկայի սկզբունքները խախտելու, այն է՝ հարգանք այլոց իրավունքների և ՀՀ օրենքների նկատմամբ,
  - ✓ տեղեկացված լինելու գնահատման չափանիշների մասին
  - ✓ տեղեկացված լինելու Ուսումնարանի կանոնադրությանը և իրենց

իրավասություններին և պարտավորություններին առնչվող ցանկացած իրավական նորմերի մասին,

- ✓ արտահայտվելու, եթե որոշում է կայացվում իր դեմ,
- ✓ ուսանողը պարտավոր է.
- ✓ ծանոթանալ սույն Կանոնագրքին Ուսումնարանի գործունեությունը որոշող քաղաքականություններին և կանոնակարգող փաստաթղթերին,
- ✓ Ուսումնարանի ներսում կամ դրանից դուրս ցանկացած անձի կամ խմբի առնչությամբ չառաջարկել կամ չընդունել կաշառք կամ որևէ այլ անօրինական ֆինանսական միջոց, այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իր ուսման կամ այլ անձանց աշխատանքի վրա,
- ✓ չվատնել Ուսումնարանի ռեսուրսները կամ ոչ իրավաչափ ձևով չօգտագործել իր տնօրինության ներքո գտնվող անձնական կամ առևտրային, այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական շահ ստանալու նպատակով կամ ի շահ որևէ այլ անձի կամ խմբի,
- ✓ ցուցաբերել հարգալից վերաբերմունք կառավարման խորհրդի, ղեկավար, դասախոսական, ուսումնաօժանդակ անձնակամզի և մյուս ուսանողների նկատմամբ՝ պահպանելով էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքները, դրական ու կառուցողական ներդրում ունենալ հաստատության ակադեմիական գործունեության մեջ,
- ✓ ուսման և հետազոտական ընթացքում պահպանել ակադեմիական ազնվության կանոնները և էթիկայի սկզբունքները,
- ✓ Ուսումնարանի գույքը և նյութական միջոցները օգտագործել ըստ նշանակության և խնայողաբար
- ✓ չարտագրել այլոց աշխատանքը կամ չփորձել ձեռք բերել որևէ արտոնություն,
- ✓ ուսումնառության ընթացքում դրսևորել արժանապատիվ, ազնիվ և ճշմարիտ վարքագիծ,
- ✓ զերծ մնալ այնպիսի արտահայտություններից կամ արարքներից, որոնք կարող են որևէ կերպ բացասական ազդեցություն ունենալ Ուսումնարանի ուսանողների և աշխատակիցների արժնապատվության վրա:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և կիրառման մեջ է դրվում հրապարակման պահից 10 օր հետո:
2. Սույն կանոնագիրքը հրապարակվում է Ուսումնարանի պաշտոնական կայքում:
3. Սույն կանոնագիրքը տարածվում է՝ այն կիրառման մեջ դնելով հետո ծագած հարաբերությունների վրա:
4. Կանոնագրքում քննարկվում է մանկավարժական խորհրդի նիստում, հաստատվում կամ նրա մեջ փոփոխություններ կատարվում են Ուսումնարանի կառավարման խորհրդի որոշման հիման վրա: